«ԿԱՋԱ» ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
"KASA" FONDATION HUMANITAIRE SUISSE
Komitas Action Suisse-Arménie
Թումանյան 24 բն. 5, 0001 Երևան, Հայաստան
24, rue Toumanian, apt.5, 0001 Erévan Arménie
☎ (374 10) 58 40 32 · E-mail: kasam@kasa.am / www.kasa.am

ՀՐԱՎԵՐ

30 սեպտեմբերի, 2016թ.

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

«ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը, որը գտնվում է ք. Երևան, Թումանյան 24, բն.5 հասցեում, Canon-lv-wx300 պրոյեկտոր ձեռք բերելու նպատակով կազմակերպում է մրցույթ:

Ծառայությունների գնումը ֆինանսավորվելու է «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամին ՄԱԿ ՓԳՀ-ից դրամաշնորհի ձևով հատկացված միջոցների հաշվին:

Բաց մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ, ք. Երևանում գործունեություն ծավալող անձինք՝ անկախ նրանց իրավաբանական կամ ֆիզիկական անձ, այդ թվում օտարերկրացի կամ բաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մրցույթի առարկա է հանդիսանում Canon-lv-wx300 պրոյեկտորը՝ որն ունի հետևյալ տեխնիկական նկարագիրը՝ ռեֆլեկտիվ DLP չիպ / 1280 x 800 (WXGA), 1024000 pixels / 3000 lumens (2100 Lumens Eco mode) / 2300:1:

Ուշադրություն՝ «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից ՄԱԿ ՓԳՀ-ի ֆինանսավորմամբ կատարված ցանկացած ծառայության մատուցում պետք է ազատված լինի ուղղակի և անուղղակի հարկումից, ինչպես օրինակ՝ ԱԱՀ (Ավելացված Արժեքի Հարկ): Առկա է հարկերից ազատման որոշումը:

Ծառայությունների մատուցման ժամկետը հաղթող մասնակցի հետ պայմանագիրն ստորագրելուց հետո մինչև 2016թ. դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածն է:

Գնային առաջարկը պետք է պարունակի գնման առարկայի ապրանքանիշը և միավորի գինը:

Մրցույթի հաղթողը կորոշվի հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո 4 օրվա ընթացքում:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ք. Երևան, Թումանյան 24, բն. 5 հասցեով (սեղմելով մուտքի դռան 5B կոճակը), մինչև *2016թ. հոկտեմբերի 5-ի ժամը 17:00-ը* և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով: Ուշադրություն՝ հիմնադրամի ոչ աշխատանքային օրերն են համարվում յուրաքանչյուր կիրակի և երկուշաբթի օրերը:

Փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է (եթե կիրառելի է) այն ներկայացնողի կողմից:

Ծրարը և դրանում ներառված փաստաթուղթը ստորագրում է դրանք ներկայացնող մասնակիցը կամ վերջինիս կողմից լիազորված անձը:

Ծրարի վրա նշվում են՝

ա) մրցույթի կազմակերպիչի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն),

բ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը,

գ) մասնակցի կոնտակտային անձի էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը,

Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի՝ (այսուհետ՝ հանձնաժողով) հայտերի բացման նիստում՝ մրցույթի հայտարարությունը հրապարակվելու օրվանից հաշված 11-րդ օրացուցային օրվա ժամը 17[00]-ը, ք. Երևան, Թումանյան 24, բն. 5 հասցեով:

Հայտերի բացման նիստում հանձնաժողովը գնահատում է՝

ա) հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սույն հրավերով սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը.

բ) բացված յուրաքանչյուր ծրարում սույն հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը.

գ) յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը սույն հրավերով սահմանված պայմաններին:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը. հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Առաջին տեղը գրաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ որակյալ ապրանքի մատչելի գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Պայմանագիր կնքելու մասին որոշումը պատվիրատուն հայտարարում է մրցույթում հաղթած մասնակցին այդ մասին էլեկտրոնային նամակով կամ հեռախոսով տեղեկացնելու միջոցով:

«ԿԱՍԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի տնօրեն
Ա. Միհասյան /